ՆՎԻՐՅԱԼ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿ

Լրացավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ամերիկայի հայոց արևմտյան թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի քահանայական ձեռնադրության 40 և առաջնորդության 20-ամյակը: Որպես ճշմարիտ հոգևորական Նորին Սրբազնությունը անձնդիր ապաստավորն է Աստուծո և ժողովրդի: Սրբազան Հայրը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դիտում է որպես առանցքը մեր ժողովրդի կյանքի, այդ իսկ պատճառով քառասուն երկար ու ձիգ տարիներ Միջին Արևելքում, Եվրոպայում, Կանադայում և Ամերիկայում անձնվիրաբար ծառայել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Սրբազան Հայրը, շնորհիվ իր իմաստուն, փոխադարձական ջերմ ու անկեղծ հարաբերությունների, խորին հարգանք ու պատիվ է վայելում Հարավային Կալիֆոռնիայի օտար հոգևոր պետերի կողմից, ինչպես նաև պետական բարձրաստիճան շրջանակներից ներս:

Դեռևս 1967 թվականի հոկտեմբերի 1-ին, Վարագա Ս. Խաչի տոնի օրը, եպիսկոպոս ձեռնադրվելու առիթով, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր պատգամն ու հորդորն է տալիս նորաօծ Տ. Վաչե և Տ. Վազգեն եպիսկոպոսներին և ի միջի այլոց ասում.

«Բարձրաստիճան այս երկու հոգևորականները եկան մայր երկիր Հայաստան, իրենց ուխտը վերստին նորոգեցին Փրկչի ս. սեղանի առաջ և ձեռնադրությամբ ու ս. օծմամբ ընդունեցին աստվածային շնորհներ և վերածնված հոգիներով վերադառնում են շարունակելու իրենց քրիստոնեական և հայկական առաքելությունը, հովվելու մեր հավատացյալ ժողովուրդը հեռավոր Ամերիկայում, բաշխելու նրանց Ավետարանի լույսը, Աստուծո խոսքը կենարար, բաշխելու նրանց շնորհները և օրհնությունները, որ բխում են այս ս. Սեղանից, ու նաև ոգի ի բռին աշխատելու, որպեսզի մեր ժողովրդի պանդուխտ զավակները իրենց քրիստոնեական հավատքի հետ միասին պահպանեն ամուր, պահպանեն անայլայլ իրենց հայկական հոգին: Որովհետև մենք դավանում ենք, որ Աստուծո իսկ տնօրինությամբ, Փրկչի իջման իսկ խորհուրդով այստեղ, ի Հայաստան աշխարհ, միաձուլվեց հայոց հավատքը, հայ ոգիին հետ միասին, միաձուլվեց Հայաստանյայց Եկեղեցին հայ ժողովրդի հետ, նրանք դարձան մեկ մարմին, մեկ հոգի՝ հավետ միացյալ, հավետ անբաժան, հավետ անբաժանելի»:

Եվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը չսխալվեց:

Երիտասարդ սերնդի հայեցի ու կրոնական դաստիարակության գործում մեծ վաստակ ունի Նորին Սրբազնությունը: Նա իր ստեղծած հոգևոր մթնոլորտով, իր հայրական հոգատար վերաբերմունքով և իր հորդորներով

երիտասարդ սերնդի հոգում սերմանում է ազնվություն, մաքրակենցաղություն, մարդասիրություն և հոգացողություն այլոց նկատմամբ:

Իր ջանադիր ու անմնացորդ նվիրումի արդյունքն է այն, որ ներկայումս Ամերիկայի հայոց արևմտյան թեմի համարյա բոլոր ծուխերը ունեն իրենց եկեղեցիները՝ իրենց հոգևոր սպասավորներով: Ուրեմն կրկին անգամ Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը չսխալվեց, երբ 1971 թվականի մայիսի 20-ի իր սրբատառ կոնդակով (հմր. 705) Սրբազան Հորը ջերմորեն և սրտանց շնորհավորեց և բարի մաղթանքներ կատարեց՝ Ամերիկայի հայոց արևմտյան թեմի առաջնորդ ընտրվելու առթիվ.

«Հոգեպէս մխիթարուած ենք գիտնալով թէ Կալիֆոռնիոյ թեմը, ձեր ընտրութեամբ կ'ունենայ երիտասարդ, անձնուէր ու աշխատանքի մեծ եռանդով օժտուած թեմական առաջնորդ մը, անհուն սիրով տոգորուած դէպի մեր Եկեղեցին և դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ձեզ տարակուսիր, թէ ձեր իշխանութեան շուրջ համախմբելով թեմիդ հոգևոր դասը, թեմական-եկեղեցական վարչութիւնները և համայն հայ հաւատացեալները, դուք նոր շրջան մը պիտի սկզբնաւորէք՝ հոգևոր կեանքի շինութեան, եկեղեցիներու պայծառութեան, կրթական ու ազգային մշակոյթի զարթօնքի և կազմակերպուած շինարար աշխատանքի»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Տ. Վաչե արքեպիսկոպոսին նշանակեց Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ՝ հաստատելով, որ Սրբազան Հայրը իր կարողություններով ու բանիմացությամբ կընպաստի նոր ծրագրերի մշակման ու իրականացման և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարեկարգման ու պայծառացման նվիրական գործին:

Հոգևոր, կրթական և ազգային գործունեությամբ զբաղվելուց բացի, Սրբազան Հայրը մեծ նվիրումով զբաղվում է նաև մտավոր ստեղծագործական աշխատանքով: Նա հեղինակ է մի շարք գրքերի, ինչպիսիք են՝ «Երգեցողութիւնք Ծննդեան», «Երգեցողութիւնք Աւագ շաբթուան» և այլն:

1990 թվականին թեև Սրբազան Հայրը բոլորեց իր վաթսուն տարին, սակայն նա այժմ էլ լի է երիտասարդական ավյունով և Աստուծո օգնականությամբ երկար տարիներ կծառայի՝ ի բարօրություն և ի ծաղկումն մեր Եկեղեցու, հայ ժողովրդի և հայ հայրենիքի:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ